ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2026թ. թիվ 159-Ա

Ն.ԴԱՎԻԹԱՎՅԱՆԻՆ «ԱՐԵՎԱԾԱԳԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի մարտի 4-ի թիվ 153-Ա որոշումը և հաշվի առնելով «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ Ն.Դավիթավյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նաիրա Կոմիտասի Դավիթավյանին 2026 թվականի մարտի 9-ից նշանակել «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև մրցույթի արդյունքում տնօրենի նշանակումը:

2. «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Ն.Դավիթավյանին տալ լրավճար «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնային դրույքաչափի 50%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մարտի 6
ք.Վանաձոր